ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Սահակ Լավրենտի Գյուլինյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրության, վերլուծության և ամփոփման, վարչապետին առաջարկություններ ներկայացնելու նպատակով իրականացրել եմ մշտադիտարկումներ, մասնավորապես՝ ներգրավված եմ եղել ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում (ԳՏՏԶ ԾԻԳ) իրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում, իրականացրել եմ գնման ընթացակարգերի հրավերների ընթացիկ վերլուծություն և պատվիրատուներինարձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր առաջարկությունների ներկայացում,
2. Ծառայության ղեկավարի հանձնարարագրի հիման վրա ներգրավված եմ եղել ուսումնասիրությունների իրականացմանը, մասնավորապես՝ «Ջրառ» ՓԲ ընկերությունում իրականացվող ուսումնասիրության շրջանակում ներգրավված եմ ուսումնասիրություն իրականացնող խմբի կազմում,
3. Իրականացրել եմ ՀՀ վարչապետի կողմից տրված հանձնարարականների կատարում, մասնավորապես՝ ներգրավված եմ եղել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ում «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակումիրականացված մշտադիտարկման աշխատանքային խմբում,
4. Իրականացրել եմ այլ ընթացիկ և չպլանավորված աշխատանքներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչության փորձագետ՝

Սահակ Գյուլինյան
« 14 » փետրվարի 2023թ.